*Հավելված 4*

*Հաստատված է*
*Տնօրինության 21.05.2024թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-32 արձանագրությամբ*
*Ուժի մեջ է մտնում 22.05.2024թ.-ից*

| ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ | |
|---|---|
| Վարկառու/լիզինգառու | ՀՀ ռեզիդենտ հանդիսացող՝ ԱՁ, Իրավաբանական անձ |
| Ոլորտ | Գյուղատնտեսություն, Զբոսաշրջություն, Արտադրություն |
| Վարկի/լիզինգի թիրախային ուղղություններ | Էներգաարդյունավետություն, Կանանց ձեռներեցության խթանում, Մարզային զարգացում, Թվայնացման և ավտոմատացման խթանում |
| Վարկի/լիզինգի նպատակը | Բիզնեսի զարգացման և ընդլայնման նպատակով |
| Վարկի/լիզինգի տեսակը | ԳՀՀ-ԵՆԲ ՎԱՐԿԵՐ/ԼԻԶԻՆԳ |
| Վարկի/լիզինգի արժույթ | ՀՀ դրամ |
| Վարկի/լիզինգի գումար | 10,000,000-2,000,000,000 ՀՀ դրամ |
| Վարկի/լիզինգի տարեկան անվանական տոկոսադրույք | 11% |
| Տարեկան փաստացի տոկոսադրույք | 11.57%-12.23% |
| Վարկի/լիզինգի տրամադրման և սպասարկման վճար | Չի սահմանվում |
| Վարկի/լիզինգի ժամկետ | 24-90 ամիս |
| Արտոնյալ ժամկետ | 0-24 ամիս |
| *Ժամկետանց մայր գումարի տույժ* | *0.1% օրական* |
| *Ժամկետանց տոկոսի տույժ* | *0.13% օրական* |
| Վարկի/լիզինգի վաղաժամկետ մարման տույժ | ✓ *Վարկառուն/լիզինգառուն իրավունք ունի ժամկետից շուտ կատարելու վարկի/լիզինգի ամբողջական կամ մասնակի մարում*<br>✓ *Վաղաժամկետ մարման տույժ **Չի կիրառվում*** |
| ❗ Վարկերը/լիզինգները ենթակա են վերաֆինանսավորման «Եվրոպական Ներդրումային Բանկի» կողմից: Վերջինիս կողմից վարկը/լիզինգը չվերաֆինանսավորելու, ինչպես նաև վարկը/լիզինգը ոչ նպատակային օգտագործելու դեպքում վարկի/լիզինգի տարեկան անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ սահմանվելով մինչև 24%: | |

FASTBANK

*Հավելված 4*

*Հաստատված է*
*Տնօրինության 21.05.2024թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-32 արձանագրությամբ*
*Ուժի մեջ է մտնում 22.05.2024թ.-ից*

| | |
|---|---|
| **Մարման եղանակ** | ✓ **Անուիտետային /մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում/**<br>✓ **Դիֆերենցված/ Մայր գումարի ամենամսյա հավասարաչափ և տոկոսագումարի ամենամսյա վճարում/**<br>✓ **Անհատական վճարումների ժամանակացույց**<br>**Մարման եղանակը՝ ըստ հաճախորդի ընտրության** |
| **Ապահովման միջոց/Գրավի առարկա** | ✓ Անշարժ գույք (շինություն) և/կամ տրանսպորտային միջոց* (Հիփոթեքի պայմանագիրը վավերացվում է նոտարական կարգով),<br>✓ Վարկային Կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ, այդ թվում գյուղտեխնիկա: |
| **Երաշխավորություն (առկայության դեպքում)** | ✓ Առնվազն 1 ֆիզիկական անձի (18-65 տարեկան) երաշխավորություն, ով չունի գործող ժամկետանց պարտավորություններ<br>✓ Երաշխավորներից յուրաքանչյուրի **վերջին մեկ տարում** ունեցած ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:<br>✓ Երաշխավորը պետք է հանդիսանա անշարժ գույքի սեփականատեր կամ ապահովված լինի գրանցված աշխատավարձով: |
| ***Ավտոմեքենա** | Ավտոտրանսպորտային միջոց, որի արտադրման տարեթիվը գրավադրման պահին չպետք է լինի ավելի հին, քան՝<br>✓ ռուսական արտադրության ավտոմեքենաների համար՝ 5 տարի,<br>✓ այլ երկրների արտարդրության ավտոմեքենաների համար՝ 10 տարի: |

**! Ավտոմեքենան ենթակա է պարտադիր «Կասկո» (ֆիզիկական վնաս և առևանգում) ապահովագրության հօգուտ Կազմակերպության՝ առնվազն վարկի գումարի չափով և վարկի գործողության ամբողջ ընթացքում յուրաքանչյուր տարի ապահովագրական պայմանագրի վերակնքման պայմանով:**

*Հավելված 4*

*Հաստատված է*
*Տնօրինության 21.05.2024թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-32 արձանագրությամբ*
*Ուժի մեջ է մտնում 22.05.2024թ.-ից*

| | |
|---|---|
| **Վարկ/Գրավ առավելագույն արժեք** | Անշարժ գույքի դեպքում Գրավի գնահատված արժեքի առավելագույնը **70%**-ի չափով: |
| **Լիզինգի կանխավճար կամ համարժեք ավանդի գրավ** | ***Նվազագույնը՝ 15%*** ** |
| ****Լիզինգի առարկայի արժեքը ներառում է լիզինգի առարկայի ձեռքբերման գինը, լիզինգի առարկայի Հայաստանի Հանրապետություն ներմուծման հետ կապված ծախսերը (տեղափոխում, այդ թվում՝ տեղափոխման հետ կապված այլ ծախսեր, մաքսազերծում, ավելացված արժեքի հարկ և այլն):** | |
| **Գրավի գնահատում** | Գրավը ենթակա է գնահատման Կազմակերպության հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության և/կամ Կազմակերպության աշխատակցի կողմից՝ կախված վարկի/լիզինգի գումարի չափից:<br>Կազմակերպության աշխատակցի կողմից գնահատումն իրականացվում է անվճար: |

## Ծանոթություն

1. Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունները և դրանց վճարներն են.

   Անշարժ գույքի՝ այդ թվում հողամասի, գրավադրման դեպքում.
   - ✓ Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ,
   - ✓ Գրավի պետական գրանցման վճար՝ 2,000-26,000 ՀՀ դրամ,
   - ✓ Նոտարական վավերացման վճար՝ 1,500-20,000 ՀՀ դրամ:

   Ավտոմեքենայի գրավադրման դեպքում.
   - ✓ Ավտոտրանսպորտային միջոցի սահմանափակումների մասին տեղեկանք՝ 3,000-4,000 ՀՀ դրամ,
   - ✓ Գրավի պետական գրանցման վճար՝ 2,000-3,000 ՀՀ դրամ,
   - ✓ Գրավի ապահովագրություն՝ վարկի գումարի 2.5%-ի չափով,
   - ✓ Նոտարական վավերացման վճար՝ 11,000-12,000 ՀՀ դրամ:
2. Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:

***Հաստատված է***
***Տնօրինության 21.05.2024թ.-ի նիստի***
***Թիվ DEC 12-32 արձանագրությամբ***
***Ուժի մեջ է մտնում 22.05.2024թ.-ից***

3. Վարկի/լիզինգի տոկոսները հաշվարկվում են վարկի/լիզինգի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:
4. Վարկը/լիզինգը տրամադրվում է  անկանխիկ եղանակով:
5. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանվում է առանձին Հավելվածով:
6. *Վարկը/լիզինգը տրամադրվում է Կազմակերպության «Հին Նորք», «Շրջանային», «Ավան», «Դավթաշեն», «Մովսես Խորենացի», «Սեբաստիա», «Կոմիտաս», «Բաղրամյան» , «Թումանյան», «Էրեբունի», «Հարավ-Արևմտյան», «Շենգավիթ», «Ալեք Մանուկյան», «Արմավիր», «Արտաշատ», «Մասիս», «Գորիս», «Գյումրի», «Վանաձոր», «Աբովյան», «Հրազդան», «Էջմիածին», «Մարտունի», «Սևան», «Գավառ», «Աշտարակ», «Իջևան», «Վեդի», «Արթիկ», «Եղեգնաձոր», «Կապան» մասնաճյուղերում:*
7. Վարկի/լիզինգի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.
   - ✓ Վարկառուի/լիզինգառուի, Գրավի և Երաշխավորի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին,
   - ✓ Վարկառուն/լիզինգառուն վարկի/լիզինգի տրամադրման պահին չպետք է ունենա ժամկետանց վարկային պարտավորություններ,
   - ✓ Վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը,
8. Վարկի/լիզինգի մերժման գործոններն են.
   - ✓ Վարկառուի/լիզինգառուն և/կամ Գրավի և/կամ Երաշխավորի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:
9. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում, Վարկառուին/լիզինգառուին տեղեկացում մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:
10. Վարկի/լիզինգի տրամադրում՝ պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:
11. Վարկի/լիզինգի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Կազմակերպության կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Կազմակերպությանը Վարկային/լիզինգային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի/լիզինգի գումարի մարմանը: Կազմակերպությունն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:
12. Արտարժույթով տրամադրված վարկերի/լիզինգի տոկոսագումարների (առկայության դեպքում նաև սպասարկման վճարը, տույժերը, տուգանքները) գանձման, ինչպես նաև տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է հանդիսանում ՀՀ ԿԲ կողմից սահմանված տվյալ օրվա հաշվարկային փոխարժեքը:
13. Հաճախորդի կողմից վարկի/լիզինգի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկի/լիզինգի տոկոսագումարները, առկայության դեպքում նաև սպասարկման վճարները, եթե վերջինս հաշվեգրվում է օրական կտրվածքով, իսկ 3-րդ անձանց կատարված վճարները ենթակա չեն նվազեցման:

14. Ոչ ֆինանսական ծառայությունների սակագները, այդ թվում քաղվածքների, պայմանագրերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները հրապարակված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Կազմակերպության գործունեության վայրերում:
15. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ/ԼԻԶԻՆԳԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎՐԱ:
16. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ/ԼԻԶԻՆԳԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:
17. ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:
18. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:
19. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ/ԼԻԶԻՆԳԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ/ԼԻԶԻՆԳԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ (**www.fastbank.am**):
20. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:
21. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:
22. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:
23. ՎԱՐԿԱՅԻՆ/ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ/ԼԻԶԻՆԳԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ/ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ

*Հավելված 4*

*Հաստատված է*
*Տնօրինության 21.05.2024թ.-ի նիստի*
*Թիվ DEC 12-32 արձանագրությամբ*
*Ուժի մեջ է մտնում 22.05.2024թ.-ից*

ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔԱՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ: